600.0085.21.03.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 մարտի 2018 թվականի №85Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի №121Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի մարտի 1-ի №19/18 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 19-ի «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №121Ա՝

   1) որոշման մեջ «Հերմոն և Գետափ» բառերը փոխարինել «Եղեգիս և Գլաձոր» բառերով, իսկ «մինչև 2018 թվականի հոկտեմբերի 9-ը» բառերը՝ «մինչև 2018 թվականի մարտի 21-ը» բառերով.

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0592 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3908 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ TP-H-628-063-2-L, 2327 կՎտ, 2017թ.,
2) գեներատոր №1՝ SEH 630 S4, 2222 կՎտ, 2017թ.,
3) հիդրոտուրբին №2՝ TP-H-820-063-2-L, 1766 կՎտ, 2017թ.,
4) գեներատոր №2՝ SEH 630 M6, 1686 կՎտ, 2017թ.:»:

2. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2016 թվականի ապրիլի 13-ի №2352-02 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած տասը միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 մարտի 2018թ.
ժամը 16 ⁰⁰